



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

14/01/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Մանասերյանը, Սոնա Մարգարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Նարե Սենիքերիմյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

Լուսինե Մարտիրոսյան, Աշոտ Հարությունյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստը արձանագրում էր ֆին. բաժնի պետ՝ Աշոտ Հարությունյանը**

Լսեցին

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Վայոց ձորի մարզպետին ուղղված ուղերձ ընդունելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Լսեցին

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրված մարզերի համաչափ զարգացման դրույթները և Վայոց ձորի մարզում կրթական և սոցիալական խնդիրների լուծման հրատապությունը.

1. Ընդունել Վայոց ձորի մարզպետին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ա/

Ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ



